**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/32409-2019

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-185-11.06.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հուլիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 923 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-185-11.06.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-ԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում է, որ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կողմից 2018 թվականին մշակվել և շահագրգիռ մարմինների առաջարկությունների հիման վրա լրամշակվել էր նույնաբովանդակ նախագիծ, որին սակայն հետագայում ընթացք չի տրվել:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կողմից մշակվել և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով նույնպես նախատեսված են նույնաբովանդակ կարգավորումներ:

Նշված հանգամանքները նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախագծի հեղինակներին առաջարկում է հետաձգել նախագծի քննարկումը, դրանով նախատեսված կարգավորումները համադրելով շրջանառության մեջ դրված նախագծի կարգավորումների հետ, արդյունքում ներկայացնելով միասնական նախագիծ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2019 թվականի N 923 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Աննա Վարդապետյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Պ-185-11.06.2019- ՊԻ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2019 թ. հուլիսի 12

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-185-11.06.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք, համարը՝ ՀՕ-248) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 209.1 հոդվածով՝

«Հոդված 209.1 Տեսակոնֆերանսի միջոցով վկայի հարցաքննության առանձնահատկությունները

1. Տեսակոնֆերանսի միջոցով վկայի հարցաքննությունը կարող է կատարվել հետեւյալ դեպքերում.

1) եթե վկան առողջական վիճակի կամ այլ հարգելի պատճառներով չի կարող մասնակցել գործով վարույթին,

2) վարույթին մասնակցող վկայի անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով,

3) անչափահաս վկայի հարցաքննության կատարման համար,

4) տարեց կամ զառամյալ վկայի հարցաքննության կատարման համար,

5) նախաքննության արդյունավետությունն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված:

2. Տեսակոնֆերանսի միջոցով վկայի հարցաքննությունը կատարվում է քննիչի հանձնարարության հիման վրա, որն ուղարկվում է հարցաքննության ենթակա վկայի գտնվելու վայրի նախաքննության կամ հետաքննության մարմնին՝ սույն օրենսգրքի 191-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:

3. Հանձնարարության հիման վրա վկայի գտնվելու վայրի նախաքննության մարմնի քննիչը կամ հետաքննության մարմինը կատարում է անհրաժեշտ դատավարական գործողություններ՝ տեսակոնֆերանսի միջոցով վկայի հարցաքննության անցկացումն ապահովելու նպատակով:

4. Տեսակոնֆերանսի միջոցով վկայի հարցաքննությունը կատարվում է սույն օրենսգրքի 206-րդ հոդվածով սահմանված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով սույն հոդվածում շարադրված առանձնահատկությունները, իսկ անչափահաս վկայի հարցաքննության դեպքում՝ հաշվի առնելով նաեւ սույն օրենսգրքի 207-րդ հոդվածով սահմանված պահանջները: Հարցաքննությունից առաջ վկայի գտնվելու վայրի նախաքննության մարմնի քննիչը կամ հետաքննության մարմինը ստուգում եւ հաստատում է վկայի ինքնությունը, իսկ գործով վարույթն իրականացնող քննիչը կատարում է հարցաքննությունը: Հարցաքննության կատարման ընթացքում վկայի գտնվելու վայրի նախաքննության մարմնի քննիչի կամ հետաքննության մարմնի աշխատակցի ներկայությունը պարտադիր է:

5. Տեսակոնֆերանսի միջոցով վկայի հարցաքննության ընթացքը եւ արդյունքները ձայնագրվում եւ (կամ) տեսագրվում են տեխնիկական միջոցներով սույն օրենսգրքի 29-րդ հոդվածի կանոններին համապատասխան, իսկ եթե վկան չի առարկում, ապա հաշվի առնելով նաեւ սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասով շարադրված առանձնահատկությունները:

6. Տեխնիկական միջոցների կիրառմամբ տեսակոնֆերանսի միջոցով վկայի հարցաքննության ընթացքում պետք է ապահովվի պատկերի եւ ձայնի պատշաճ որակը, ինչպես նաեւ տեղեկատվական անվտանգությունը:

7. Տեսակոնֆերանսի միջոցով հարցաքննության արձանագրությունը կազմվում է սույն հոդվածով սահմանված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի 29-րդ եւ 209-րդ հոդվածներով շարադրված առանձնահատկությունները: Հարցաքննության արձանագրությունը կազմում է վկայի գտնվելու վայրի նախաքննության մարմնի քննիչը կամ հետաքննության մարմինը՝ նշում կատարելով այդ մասին եւ ստորագրելով:

8. Հարցաքննության արձանագրությունը, վկայի ներկայացրած նյութերը, փաստաբանի արտոնագիրը, եթե վկան հարցաքննության է ներկայացել փաստաբանի հետ, վկայի գտնվելու վայրի նախաքննության մարմնի քննիչը կամ հետաքննության մարմինն ուղարկում է գործով վարույթն իրականացնող քննիչին:

9. Գործով վարույթն իրականացնող քննիչը, ստանալով տեսակոնֆերանսի միջոցով վկայի հարցաքննության արձանագրությունը՝ կից նյութերով, եւ ստուգելով դրանք, ստորագրում է հարցաքննության արձանագրությունը»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման վերաբերյալ

1.Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

1.1.Առկա հիմնախնդիրները.

Ժամկետները քրեական դատավարությունում դատավարական ձևի պահպանման կարևոր երաշխիքներից են, որոնք ապահովում են քրեական դատավարության խնդիրների արագ և արդյունավետ իրականացումը: Ժամկետների սահմանումը քրեական դատավարությունում նաև մասնավոր անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևոր երաշխիք է: Պատահական չէ, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս անդրադարձել է ինչպես միջդատական վարույթում, այնպես էլ դատական քննության ընթացքում «ողջամիտ ժամկետում գործերի քննության» հասկացությանը: Ընդ որում, Եվրոպական դատարանը «ողջամիտ ժամկետ» եզրույթը ներկայացնում է որպես ժամանակահատված, որի ընթացքում բացառվում է գործով քննության չափազանցված և չհիմնավորված դանդաղումը[1]:

Նշված սկզբունքի էությունը և նշանակությունը հանգում է պաշտոնատար անձանց, որոնք լիազորված են գործով վարույթն իրականացնել, քրեական վարույթի ողջամիտ ժամկետը պահպանելու պարտականությանը՝ պարտավորեցնելով նրանց հաշվի առնել բացառապես օրենքով նախատեսված հանգամանքները դրանք երկարացնելու համար:

Միաժամանակ, հարկ է փաստել, որ պրակտիկ գործունեության ընթացքում «ողջամիտ ժամկետում գործերի քննության» սկզբունքի պահպանումը մնում է խնդրահարույց:

Քրեական գործերի մեծ մասով առանցքային վկաների, որոնք հեռու են գտնվում նախաքննության մարմնից, հարցաքննության անհնարինությունը հիմք է հանդիսանում նախաքննության ժամկետները բազմաթիվ անգամներ երկարացնելու համար:

Դառնալով հանցագործության ականատես Հայաստանի Հանրապետության մի տարածաշրջանում՝ անձն անձնական պատճառներով (վերադարձ մշտական բնակության վայր, այլ տեղանքում մշտական բնակության հաստատում, գործուղում, պատժի կրում և այլն) կարող է լքել այն, ինչը բավականին բարդացնում է հարցաքննության համար քննիչի մոտ վկայի ներկայության ապահովումը: Քննիչի

[1] Микеле Де Сальвиа. Прецеденты Европейского Суда по правам человека. СПб., 2004. Стр. 460-462.

մեկնումը վկայի գտնվելու վայր պահանջում է լրացուցիչ ժամանակային և նյութական ծախսեր: Ընդ որում, չպետք է մոռանալ, որ քննիչի վարույթում, ներկայիս ծանրաբեռնվածության պայմաններում, գտնվում են բազմաթիվ քրեական գործեր, և մեկ վկայի հարցաքննության կատարման համար քննիչի պարտադրված մեկնումն այլ տեղանք՝ կերկարաձգի այլ քրեական գործերով նախաքննության ընթացքը:

1.2.Խնդրի դատավարագիտական տեսանկյունը.

Քրեական արդարադատության ոլորտում տեխնիկական միջոցների կիրառման արևմտյան փորձի ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ տեսակոնֆերանսի մշակման և պրակտիկ կիրառման առաջամարտիկ են հանդիսանում ԱՄՆ իրավապահ մարմինները: Տեսակոնֆերանսի ներդրման ժամանակահատված է հանդիսանում 1964 թվականը, երբ AT&T ընկերությունն առաջին անգամ ներկայացրեց տեսահեռախոսների համակարգը: Մտահաղացումը հետաքրքրություն առաջացրեց, բայց մի շարք տեխնիկական խնդիրները և պատկերի ցածր որակը թույլ չտվեցին նշված տեխնիկական մշակումները լայնորեն կիրառել քրեական վարույթի շրջանակներում:

1980-ական թվականների սկզբին Compression Labs ամերիկյան ընկերությունը ներկայացրեց տեսակոնֆերանսկապի իր համակարգը: Սակայն, սարքավորումների և հատուկ հաղորդակցության գծերի տվյալ ժամանակահատվածի համար բավականին թանկ լինելու հանգամանքը, ինչպես նաև այն, որ տեսակոնֆերանսի մասնակիցները պետք է գտնվեին հատուկ տեխնիկական կահավորվածություն ունեցող սրահներում, նշված տեխնոլոգիան ևս լայնորեն կիրառելի չդարձրին:

Տեսակոնֆերանսկապի համակարգն իրապես մատչելի դարձավ 1990-ական թվականներին, երբ բարձր տեխնոլոգիաների ոլորտում նկատվեց աննախադեպ առաջընթաց, որով էլ պայմանավորված՝ նվազեցին դրանց իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների գները:

Քրեական վարույթի շրջանակներում ժամանակակից հեռահաղորդակցության տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ առաջին նորմերը տեղ են գտել Միավորված ազգերի կազմակերպության 9-րդ կոնգրեսի ընթացքում կայացված որոշումներում (24.01.1995թ.), որոնք ուղղված էին հանցավորության կանխարգելմանը և իրավախախտում կատարած անձանց հետ վարվելու հարցերին: Դրանցով նախատեսվել է ուղիղ տեսակոնֆերանսի միջոցով ցուցմունքների ստացման հնարավորություն, մասնավորապես՝ երեխաների դեմ կատարված հանցագործությունների գործերով[2]:

«Տեսակոնֆերանս» տերմինի բովանդակությունն առաջին անգամ իր մենագրության մեջ բացահայտել է ռուս անվանի դատավարագետ Ա.Գ.Վոլևոձը: Նրա կարծիքով՝ դա պատկերների, ձայների ցանկացած փոխանցում և ընդունում է,

[2] Резолюция ЭКОСОС 1990/22 от 24.05.1990 (Документ ООН A/CONF.144/20 от 07.06.1990), резолюция IX Конгресса ООН по предупреждению преступности и обращению с правонарушителями (Документ ООН A/CONF.169/7 от 24.01.1995).

համակարգիչների միջև տեղեկատվության փոխանակում՝ տեսակոնֆերանսի համար նախատեսված տեխնոլոգիաների կիրառմամբ[3]:

Ներկայումս տեսակոնֆերանսկապի ժամանակակից սարքավորումները թույլ են տալիս քրեական դատավարության մասնակիցներին ոչ միայն տեսնել և լսել միմյանց, այլև փոխանակվել տվյալներով, հետազոտել և գնահատել դրանք հրապարակայնորեն՝ անկախ մասնակից կողմերի տարածքային հեռավորությանը:

Հետևաբար, քրեական վարույթի շրջանակներում տեսակոնֆերանսկապի համակարգի կիրառումն օրինական կլինի այն դեպքում, եթե պահպանվեն քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կանոնները և ընթացակարգերը (արձանագրության վարում, զուգահեռ տեսաձայնագրում):

1.3.Խնդրի իրավահամեմատական տեսանկյունը.

Շարադրվածի կապակցությամբ, հարկ ենք համարում անդրադառնալ սույն հիմնավորման շրջանակներում բարձրացված հարցի օրենսդրական կարգավորումների արտասահմանյան փորձին:

Օրինակ՝ Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանվում է, որ վարույթն իրականացնող մարմինը կարող է կատարել վկայի հեռահարցաքննություն: Ընդ որում, նշված հոդվածը հստակ սահմանում է այդպիսի հարցաքննություն անցկացնելու դեպքերը, այն է՝ **1) եթե այդպիսի անձի անմիջական հարցաքննությունը դժվարեցված է, 2) եթե նրա հարցաքննության ապահովումը լրացուցիչ ծախսերով է պայմանավորված, 3) վկայի կամ տուժողի անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով:**

Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի համաձայն՝ հեռահարցաքննության մասին որոշումն ընդունում է դատարանը՝ սեփական նախաձեռնությամբ կամ վարույթի կողմի միջնորդությամբ: Ընդհանուր առմամբ, տեսակոնֆերանսկապի միջոցով վկայի հարցաքննությունը կատարվում է ընդհանուր կանոններով: Սակայն, Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը վերապահում է պարունակում, ըստ որի՝ հարցաքննության ենթակա անձին պարտադիր կերպով պետք է ծանոթացվեն իր դատավարական իրավունքները և սուտ մատնության համար քրեաիրավական հետևանքները[4]:

Մինչդատական և դատական վարույթի ընթացքում նշված հեռահաղորդակցության տեխնոլոգիաների կիրառման ընթացակարգը սահմանող հստակ և մանրամասն կարգավորումներ է պարունակում Ուկրաինայի գործող քրեադատավարական օրենսդրությունը:

Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի համաձայն՝ այնպիսի քննչական գործողություններ, ինչպիսիք են հարցաքննությունը, անձանց և առարկաների ճանաչումը, կարող են կատարվել տեսակոնֆերանսի

---

[3] Волеводз А.Г. Указ. Соч. Стр. 390-391.

[4] Дистанционный процесс посредством видеоконференцсвязи: опыт Эстонии. A/conf.189/ Estonia/5.

ռեժիմով այլ շինությունից հեռարձակման եղանակով (հեռավար մինչդատական քննություն) հետևյալ դեպքերում.

1) **առողջական կամ այլ հարգելի պատճառներով որոշակի անձանց վարույթին մասնակցելու անհնարինության դեպքում,**

2) **անվտանգության ապահովման անհրաժեշտությունից ելնելով,**

3) **փոքրահասակ կամ անչափահաս վկայի հարցաքննության կատարման համար,**

4) **այդպիսի միջոցների կիրառում՝ մինչդատական վարույթի օպերատիվությունն ապահովելու համար,**

5) **քննիչի, դատախազի, քննիչ-դատավորի կողմից բավարար ճանաչված այլ հիմքերի առկայության դեպքում:**

Քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հեռավար մինչդատական վարույթի իրականացման մասին որոշումը կայացնում է քննիչը, դատախազը, իսկ 225-րդ հոդվածի կարգով տեսակոնֆերանսի միջոցով հարցաքննություն կատարելու դեպքում՝ քննիչ-դատավորը՝ սեփական նախաձեռնությամբ կամ քրեական վարույթի կողմերի կամ դատավարության մյուս մասնակիցների միջնորդությամբ:

Այն դեպքում, երբ քրեական վարույթի կողմը կամ տուժողն առարկում է հեռավար մինչդատական վարույթ իրականացնելու դեմ, քննիչը, դատախազը, քննիչ-դատավորը կարող է որոշում ընդունել հեռավար մինչդատական վարույթ իրականացնելու մասին՝ միայն պատճառաբանված որոշմամբ՝ հիմնավորելով դրա անհրաժեշտությունը:

Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հեռավար մինչդատական վարույթի ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցները և տեխնոլոգիաները պետք է ապահովեն պատկերի և ձայնի պատշաճ որակը, ինչպես նաև տեղեկատվական անվտանգությունը: Ընդ որում, պետք է ապահովվի քննչական գործողության մասնակիցների հնարավորությունը հեռավար եղանակով հարցեր ուղղելու այն անձանց, ովքեր մասնակցում են քննչական գործողությանը և ստանալու պատասխաններ, իրացնելու իրենց վերապահված դատավարական այլ իրավունքները և կատարելու դատավարական պարտականությունները:

Այն դեպքում, երբ անձը, որը պետք է մասնակցի հեռավար մինչդատական վարույթին, պահվում է նախնական կալանքի տակ կամ ազատազրկման ձևով պատիժ է կրում, ապա քննչական գործողությունների կատարման ապահովումն իրականացվում է այդպիսի հիմնարկի ծառայողի կողմից:

Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 10-րդ մասում հատուկ նշում կա այն մասին, որ անձը, որի անվտանգությունն ապահովվում

է, կարող է հարցաքննվել տեսակոնֆերանսի ռեժիմով արտաքինի և ձայնի այնպիսի փոփոխություններով, որոնց պարագայում հնարավոր չէ նրան ճանաչել[5]:

1.4. Խնդրի տեխնիկական ապահովման տեսանկյունը.

Իր տեխնիկաֆունկցիոնալ էությամբ տեսակոնֆերանսկապը յուրօրինակ հեռուստակամուրջ է, որի իրագործման համար ներկայումս անհրաժեշտ է երեք կարևոր բաղադրիչ.

1. թողարկման համար վիդեոսարքավորումներ և պատկերի վերարտադրման համար էկրան,

2. ձայնի փոխանցման և վերարտադրման համար խոսափող և ակուստիկ սարք,

3. հեռահաղորդակցության համապատասխան ցանց, որի ներքո տվյալ դեպքում անհրաժեշտ է հասկանալ սերտիֆիկացված, այդ թվում՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան, աուդիո և վիդեո սարքավորումներ, որոնք համապատասխանում են տեսկոնֆերանսկապի անցկացման նպատակներին:

Այսպիսով, տեսակոնֆերանսի միջոցով հարցաքննության կատարման համար համակարգչի օգտագործումն անհրաժեշտ և պարտադիր չէ:

Բացի այդ, անլար ցանցերի այս դարաշրջանում էլեկտրականության առկայությունը ևս պարտադիր չէ: Մշակվել և ներկայումս լայնորեն կիրառվում է Voyager Tandberg Tactical տեսակի դյուրակիր ճամպրուկը, որում ներդրված է տեսակոնֆերանսկապի շարժական համակարգ, որն իրականացվում է առանձնացված համացանցային ուղիների կամ արբանյակային ցանցի միջոցով[6]:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ դատավարական գործողությունների ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցների օգտագործման կարգը սահմանում է ՀՀ Կառավարությունը, ուստի նման խիստ օրենսդրական պահանջն կապահովի տեսակոնֆերանսի միջոցով հարցաքննության գործընթացի պատշաճ իրականացումը:

2.Առաջարկվող կարգավորման բնույթը և ակնկալվող արդյունքները.

Սույն նախագծով առաջարկվում է նոր իրավական կարգավորումներ, որոնք հանգում են հետևյալին.

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի 3-րդ մասով քննիչին հնարավորություն է տրված այլ վայրում քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտության դեպքում դրանց կատարումը հանձնարարել տվյալ վայրի նախաքննության մարմնի քննիչին կամ հետաքննության մարմնին, բայց, այդուհանդերձ, որակյալ հարցաքննություն կատարելու համար անհրաժեշտ է ամբողջապես տիրապետել քրեական գործով հավաքված բոլոր

---

[5] Уголовно-процессуальный кодекс Украины от 13 апреля 2012 г. № 4 651-;/VI//URL:http//www.base.spinform.ru

[6] Щерба С.П., Архипова Е.А. Применение видеоконференцсвязи в уголовном судопроизводстве России и зарубежных странах. Стр. 25.

նյութերին և կատարված հանցանքի փաստական հանգամանքներին: Ուստին, քրեական գործի արդյունավետ քննության և հանցագործության բացահայտման անհրաժեշտությունից ելնելով, վկային պետք է հարցաքննի գործով վարույթն իրականացնող քննիչը:

Ներկայացված օրենքի նախագիծը թույլ է տալիս գործով վարույթն իրականացնող քննիչին անձամբ կատարել հարցաքննությունը՝ չլքելով նախաքննության կատարման վայրը և չսպասելով վկայի ներկայանալուն, այսինքն՝ նպաստում է նախաքննության ժամկետների էական կրճատմանը, ինչը նաև հարմարավետ է հենց վկաների համար՝ նախաքննության մարմին մեկնելու հետ կապված լրացուցիչ ծախսերից և ժամանակային կորստից խուսափելու տեսանկյունից:

Օրենքի նախագիծը թույլ կտա մինչդատական վարույթում գտնվող գործերով կատարել տեսակոնֆերանսի միջոցով վկայի հարցաքննություն՝ պահպանելով նախաքննության կատարման հիմնական կանոնները և հաշվի առնելով անչափահասների հարցաքննության առանձնահատկությունները:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը գործով վարույթն իրականացնող քննիչից պահանջում է վկայի ցուցմունքը ձևակերպել քննչական գործողության արձանագրության ձևով, որը պարտադիր կարգով պետք է ստորագրվի վերջինիս կողմից: Օրենքի նախագծով արձանագրություն կազմելու, այն վկային ստորագրման ներկայացնելու պարտականությունը կրում է վկայի գտնվելու վայրի քննիչը կամ հետաքննության մարմինը: Այդ կերպ վկայի գտնվելու վայրի քննիչը կամ հետաքննության մարմինը կհանդիսանա արձանագրությունը կազմող անձ, իսկ գործով վարույթն իրականացնող քննիչը՝ հարցաքննող անձ, որը նաև ստորագրում է այն ստանալուն պես:

Չնայած նրան, որ տեսակոնֆերանսի միջոցով վկայի հարցաքննության արձանագրության հետագա առաքումը գործով մինչդատական վարույթն իրականացնող քննիչին՝ այն քրեական գործի նյութերին կցելու համար, ևս որոշակի ժամանակային կորուստ է ենթադրում, բայցև , գործով մինչդատական վարույթն իրականացնող քննիչը հեռավար եղանակով վկայից ժամանակին ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն, ինչը թույլ է տալիս պլանավորել քրեական գործով հետագա անհրաժեշտ դատավարական գործողությունների կատարումը:

Օրենքի նախագծով նախատեսվում է տեսակոնֆերանսի միջոցով դատավարությանը մասնակցող անձանցից միայն վկայի հարցաքննություն: Դա նախ և առաջ կապված է քրեական գործով վերջինիս ունեցած դատավարական իրավունքների և կարգավիճակի հետ:

Օրինակ՝ քրեական գործով տուժողին իրավունք է վերապահված ծանոթանալ փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը, փորձագետի եզրակացությանը, քրեական գործի նյութերին, մասնակցել այլ քննչական գործողություններին, ինչի կապակցությամբ ենթադրելի է, որ տուժողի ներկայանալը գործով վարույթն իրականացնող մարմին, թեկուզև մեկ անգամ ամբողջ նախաքննության ընթացքում, պարտադիր է: Բացի այդ, մեծամասամբ դեպքերում քրեական գործի հարուցումը

նախաձեռնվում է հենց տուժողի կողմից, ինչը նաև որոշակի պարտականություններ է վերապահում նրան:

Այսպիսով, ներկայացվող օրենքի նախագիծն ուղղված է քրեական գործերով նախաքննության ողջամիտ ժամկետի ապահովմանը, քրեական գործերով բոլոր հանգամանքների լրիվ և բազմակողմանի հետազոտմանը, ինչպես նաև քննչական գործողությունների կատարումն ապահովելուն ուղղված լրացուցիչ ծախսերի և անհարկի ժամանակային կորստի կրճատմանը: